«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Ինտեգրված դասի կազմակերպումը «Մայրենի» և «Կերպարվեստ» առարկաներից
ԱՌԱՐԿԱ	հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Մանուչարյան Արմինե Անուշավանի
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Վահրամաբերդի Հ. Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1. Ներածություն 4

2. Հիմնական մաս 5

2.1. Ինտեգրված դասի առանձնահատկությունները 5

2.2. Ինտեգրված դասի նպատակները 7

2.3. Ուսուցիչների համագործակցությունը ինտեգրված դասեր կազմակերպելիս 9

2.4. Սովորողների գործունեությունը ինտեգրված դասերին 11

3. Հետազոտական մաս 14

4. Եզրակացություն 20

5. Գրականություն 22

6. Հավելված 23

1. Ներածություն

Թեմայի արդիականության հիմնավորում: Վերջին տարիներին շատ է խոսվում ինտեգրված ուսուցման, ինտեգրված դասերի մասին: Ինչպե՞ս կազմակերպել ինտեգրված դասը, ի՞նչ խնդիրներ է լուծում այն, ինչո՞վ է արդյունավետ: Ինչո՞վ է ինտեգրված դասը ազդում սովորողների համակարգված գիտելիքների ձեռքբերմանը, ինչքանո՞վ է ազդում նրանց աշխարհայացքի ձևավորմանը:

Հաշվի առնելով այն պահանջները, որ ժամանակակից կրթությունը դնում է իր առջև, ուսումնառության կազմակերպման նորարարական և արդյունավետ ձևերի որոնումը շատ արդիական է: Ինտեգրված դասերի արդիականությամբ է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ ԿԳՄՍ-ն պլանավորում է ինտեգրված դասերի ներառում դպրոցներում:

2023 թվականից ներդրվող չափորոշիչներում կարևորվում են միջառարկայական կապերը և առարկաների ինտեգրումը: Մասնավորապես «Մայրենի» առարկայի չափորոշչում կարևորվում է կապը «Կերպարվեստ» առարկայի հետ: Չափորշչի վերջնարդյունքներում նշված է, որ սովորողը «…. հաղորդելիք նյութի համար ընտրի համապատասխան երաժշտություն, կտավի վերատպություն, քանդակ, բացատրի ընտրության շարժառիթը, նյութի բովանդակությանը համապատասխան նկարազարդումներ անի»[4]:

Միջառարկայական կապի անհրաժեշտությունը նշվում է նաև «Կերպարվեստ» առարկայի չափորոշչում. «… նկարազարդումներով, ապլիկացիաներով, ծեփելով ուղեկցել ելույթը՝ հաղորդվելիք նյութն առավել գրավիչ դարձնելու համար [3]:

Աշխատանքի նպատակը: Ուսումնասիրելով ինտեգրված դասի կազմակերպման սկզբունքներն ու մեթոդները՝ քննել ինտեգրված դասի արդյունավետության բարձրացման հնարավորությունները և առաջադրել արդյունավետ այլ մեթոդներ:

Խնդիրները.

- ուսումնասիրել ինտեգրված դասերը, դրանց առանձնահատկությունները, անցկացումը, ինտեգրված դասերի պլանները

- մշակել ուսուցիչների համագործակցության քայլերը ինտեգրված դասերը կազմակերպելիս
- ներկայացնել ինտեգրված դասի օրինակ
- բացահայտել առաջացած խնդիրները
- վերլուծել արդյունավետ մեթոդները

2. Հիմնական մաս

2.1. Ինտեգրված դասի առանձնահատկությունները

«Բոլոր գիտությունները այնքան են կապված միմյանց հետ, որ դրանք հեշտ է սովորել բոլորը միանգամից, քան դրանցից ինչ - որ մեկը բոլորից առանձին»:

Ռենե Դեկարտ

Դասի ոչ ավանդական ձևերից է միջառարկայական ինտեգրված դասը: Ինտեգրված դասերի հենքը միջառարկայական կապերի հաստատումն է և առարկաների միասնական, ամբողջական ընկալումը: Դրանց կարևորություն մասին խոսել է նաև մանկավարժության՝ որպես գիտության հիմնադիր Յա. Ա. Կոմենսկին: Իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նա նշում է, որ առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև: Սա բացատրվում է նրանով, որ երբ ուսուցումը կատարվում է կապերի միջոցով, փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս վեր հանել պատճառները, ցույց տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող [1, էջ 82]:

«Ինտեգրում» /integr-ամբողջ/ բառը լատիներենից թարգմանաբար նշանակում է վերականգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ, ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ:

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը[2]:

Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ինտեգրված դասը ոչ ստանդարտ է, հետաքրքիր, կենտրոնացնում է ուշադրությունը, ամրապնդում է միջառարկայական կապերը: Հնարավորություն է տալիս համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից: Նույն թեման բացահայտվում է տարբեր տեսակի գործունեությունների միջոցով: Թեմայի բազմակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս շրջապատող աշխարհի իմաստալից ընկալում: Ինտեգրված դասերում գերակշռում է այն գաղափարը, որ աշխարհում ամեն ինչ կապի մեջ է և միասնական:

Ուսումնական ծրագրի ինտեգրման մասին գաղափարը ձևավորվել է դեռևս 1800-ական թվականների վերջին: Ինտեգրված դասերի առաջացմանը և զարգացմանը անդրադարձ է կատարվել «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ» ձեռնարկում: Այստեղ նշվում է, որ ինտեգրված դասերի հեղինակը գերմանացի փիլիսոփա և մանկավարժ Յոհան Ֆրիդրիխ Հերբարտն էր, նրան հաջորդել են Ջոն Դյուին, Ջեյմս Բինը: Հերբարտն առաջինն էր, որ հանդես եկավ ուսումնական առանձին առարկաները որոշակի թեմաների շուրջ միավորելու առաջարկով և այդ երևույթն անվանեց «գիտությունների ինտեգրում»: 1920-ական թվականներին այդ առաջադիմական շարժումը ղեկավարում էր Ջոն Դյուին: Նա կարծում էր, որ բոլոր գիտությունները սկիզբ են առնում «մեր միակ

մոլորակի և մեր ապրած միակ կյանքի պահանջներից: Միամտություն է կարծել, թե երկրագունդը կազմված է տարբեր բնույթներ ունեցող առանձին շերտերից՝ մաթեմատիկական, ֆիզիկական, պատմական և այլն»: Ուսումնական ծրագրի ինտեգրման մեկ այլ ջատագով Ջեյմս Բինը կարծում է, որ «ուսումնական ծրագրի ինտեգրումը պարզապես տարբեր առարկաների դասերի պլանի վերադասավորում կամ մակերեսային վերափոխումներ պահանջող կազմակերպչական միջոց չէ: Այն դպրոցի գոյության նպատակի մասին խորհելու ձև է, ըստ որի՝ ուսումնական ծրագրի աղբյուրները պետք է լինեն կյանքի առաջադրած խնդիրները, հարցերն ու անհանգստացնող իրողությունները»[1, էջ 84]:

Մեր երկրում, կրթական բարեփոխումներին զուգահեռ, ինտեգրված դասերին անդրադարձ եղավ 1980-1990-ական թվականներին: Միջառարայական կապերը միշտ էլ ներառվել են դասերի ընթացքում, սակայն ինտեգրման գործընթացը նոր էր, տարբեր սոսկ միջառարկայական կապերից: Դպրոցի արդիականացումը պահանջում է ավելի շատ ուշադրություն դարձնել ինտեգրված ուսուցմանը, ուսումնական բոլոր առարկաները դիտել միասնության մեջ: Սկզբնական շրջանում ինտեգրված դասերը փորձարկում և կազմակերպում էին հիմնականում տարրական դասարաններում, իսկ հետագայում՝ նաև միջին և ավագ դպրոցներում:

2.2. Ինտեգրված դասի նպատակները

Ինտեգրված դասի հիմնական նյութը դառնում է դասի համակարգային նշանակության բաղադրիչը: Համակարգային կարող է լինել ինտեգրված դասի միայն այն հատվածը, որը որոշում է առաջադրանքի նպատակը: Նման բաղադրիչներ են դառնում առանձին հասկացությունները, կանոնները, օրենքները, գաղափարները, մեթոդները կամ ուսումնառության միջոցները: Ինտեգրման ձևը կախված է դասի նպատակից և համակարգային բաղադրիչի ընտրությունից [1, էջ 86]:

Կարելի է ենթադրել, որ ինտեգրված դասերը միտված են աշակերտի բազմակողմանի զարգացմանը: Քանի որ նմանատիպ դասերի ընթացքում աշակերտները պարբերապար

սկսում են կապ հաստատել տարբեր առարկաների, երևույթների, հասկացությունների միջև, նրանք սկսում են աշխարհը դիտարկել որպես մեկ ամբողջություն: Սրա շնորհիվ աշակերտները ստանում են աշխարհի հոլիստիկ՝ ամբողջական պատկերը[1]:

Ինտեգրված դասը երկու կամ ավելի ուսուցիչների համատեղ գործունեությունն է, որի վերջնական նպատակը պետք է լինի՝

- ինֆորմացիայի, գիտելիքների ընդլայնում, համակարգում
- ուսումնասիրության շրջանակների ընդլայնում
- թեմայի ընդհանրացում, խորացում
- սովորողների փորձի ու տեսական մասի ըմբռնման միավորում

Ինտեգրման խնդիրը ոչ միայն մի քանի առարկաների ուսումնառության ընդհանրության ցուցադրումն է, այլև դրանց կապի միջոցով շրջակա աշխարհի միասնականության ցուցադրումը:

Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Ինտեգրված դասերը կարող են լինել միջառարկայական, երբ ինտեգրումը իրականացվում է երկու տարբեր առարկաների միջև, բազմաառարկայական, երբ ընդգրկվում են երկուսից ավելի առարկաներ, և անդրառարկայական, երբ նույն թեման տարբեր դասարաններում են ուսումնասիրում:

Սակայն ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում

2. թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից

3. այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ

4. երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից

5. առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ [2, էջ 403]:

2.3. Ուսուցիչների համագործակցությունը ինտեգրված դասեր կազմակերպելիս

Ինտեգրված դաս կազմակերպելիս զարգանում են ուսուցիչների ստեղծագործական հմտությունները, այն խթանում է ինքնակրթությունը, զարգացնում է փորձի փոխանակումը: Համագործակցումը տվյալ դեպքում նպաստում է ուսումնասիրվող նյութի համակարգված ընկալմանը, դասի ընդհանուր նպատակները օգնում են ընդլայնելու գիտելիքները, խորացնելու հասկացությունները, նյութը դիտարկելու տարբեր տեսանկյուններից:

Ինտեգրումը հնարավորություն է ընձեռում ուսուցչի ինքնակրթության, ինքնադրսևորման, ստեղծագործելու համար, նպաստում է նրա կարողությունների բացահայտմանը:

Ի՞նչ է պետք ինտեգրված դաս կազմակերպելու համար.

ա/ միջառարկայական կապի բնույթը, ինտեգրվող թեման, նյութը

բ/ ինտեգրված դասի անցկացման դրդապատճառները, նպատակները

գ/ դերերի բաշխում ուսուցիչների միջև

դ/ դասի պլանի համատեղ կազմում, տևողության որոշում

ե/ դիդակտիկ նյութերի, մեթոդների ընտրություն

զ/ սովորողների համար պայմանների ստեղծում, նրանց գործնական հմտությունների կիրառում

է/ վերջնարդյունքների հստակեցում

Պարզ և հստակ ձևակերպելով դասի նպատակը՝ ուսուցիչը հավաքում է մեկ դասում միավորվող ուսումնական նյութը, այսինքն՝ որոշում է ինտեգրման բաղադրիչները: Դա արվում է համագործակցող ուսուցչի հետ: Այս փուլում հավաքվում են միայն ուսումնական թեմաներն ու դրանց առանձին մասերը, որոնք պետք է կազմեն ինտեգրման բովանդակային հիմքը: Այստեղ դրսևորվում է նաև ինտեգրմանը մասնակցող ուսուցիչների փոխհամաձայնությունը: Ապա երկու ուսուցիչ սկսում են վերլուծել ընտրված նյութը և բաժանում են այն երկու մասի՝ հիմնական և օժանդակ: Հիմնական նյութը դառնում է դասի՝ համակարգ ձևավորող բաղադրիչը: Որպես համակարգ ձևավորող բաղադրիչ՝ կարող է հանդես գալ ինտեգրվող բովանդակության միայն այն հատվածը, որը որոշվում է առաջադրանքի նպատակով: Որպես այդպիսի բաղադրիչներ՝ կարող են լինել առանձին հասկացություններ, օրենքներ, մտքեր, ուսուցման մեթոդներ և միջոցներ: Համակարգ ձևավորող բաղադրիչի առանձնացումը կարևորվում է նրանով, որ հենց դրանով է որոշվում ինտեգրվող նյութը, որպեսզի այն մատուցվի ամբողջովին, որպեսզի պարզ բացատրվեն կամ պարզվեն դրա ի հայտ գալու պատճառները: Այսպիսով, ելնելով ինտեգրված դասի տեսակից և ինտեգրվող առարկաների դասերի տիպերից, ուսուցիչները համատեղ կազմում են իրենց դասի նպատակները՝ զուգակցելով ընդհանուրը մասնավորի հետ, շաղկապելով ինտեգրվող նյութի բովանդակությունները տարբեր առարկաների տեսանկյուններից: Կախված նրանից, թե ինչ ձևով է տեղի ունենում ինտեգրումը (հավասարապես ինտեգրվում են երկու կամ ավելի առարկաներ, ինտեգրման ժամանակ

գերակայությունը տրվում է մեկ առարկայի, իսկ մյուսը դառնում է օժանդակ, օգնող առարկա և այլն)՝ կազմվում է դասի պլանը, որոշվում է դասի տևողությունը (45 րոպե, 90 րոպե): Պլանի մեջ հստակորեն ներկայացվում է քայլերի հաջորդականությունը, պարզորոշ ընդգծվում են առաջատար և օժանդակ առարկաները: Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի եռամակարդակ պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը [2, էջ 404]:

2.4. Սովորողների գործունեությունը ինտեգրված դասերին

Ինտեգրված դասերին զարգանում են սովորողների վերլուծելու, համեմատելու, որոնելու, երևույթների և առարկաների միջև կապեր գտնելու կարողությունները, նրանք ավելի հետաքրքրված են լինում: Ի՞նչ է տալիս աշակերտին ինտեգրված դասը: Գիտելիքների ընդլայնում, կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի զարգացում, ամբողջական աշխարհայացքի ձևավորում, ընկերասիրություն, ինքնագնահատում, ինքնահաստատում:

Ինտեգրված դասերը զարգացնում են աշակերտների ներուժը, խրախուսում են շրջապատող իրականության ակտիվ իմացությունը, պատճառահետևանքային հարաբերությունների ըմբռնումն ու հայտնաբերումը, տրամաբանության, մտածողության և հաղորդակցման հմտությունները: Աշակերտը փոխում է իր վերաբերմունքը դասի նկատմամբ, մի առարկայից իր սովորածը կիրառում է մեկ այլ առարկայի դասի ժամանակ, փորձում է գտնել պատճառահետևանքային կապեր, եզրահանգումներ անել, ի վերջո, այլ ձևով է ընկալում ուսումը, ոչ թե տարանջատ առարկաներ, այլ միասնական համակարգ, ինչպես իրական կյանքում է: Ամենակարևորը, որ աշակերտներին տալիս է մոտիվացիա, ինչի պակասը այսօր շատ կա դպրոցում:

Ուսումնառության ընթացքում աշակերտների աշխատանքի արդյունավետությունը փաստում են մի շարք այլ հանգամանքներ: Աշակերտը պատասխանատվություն է կրում ուսուցչի հետ, քանի որ ինֆորմացիայի միակ աղբյուրը այլևս ուսուցիչը չէ: Ինտեգրված

դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Դասը չի դիտվում աշակերտների կողմից սոսկ որպես երևույթ, որը պետք է անգիր սովորել: Ավանդական դասի կառույցի շարունակական կիրառումը կարող է առաջացնել հոգնածություն և ձանձրույթ: Ինտեգրված դասի դեպքում դրանք վերանում են, դասը խթանում է սովորողների հետաքրքրությունը և աշխուժությունը: Ինտեգրված դասերը հաճախ համագործակցային, հետազոտական, ստեղծագործական են և ուղեկցվում են բացահայտումներով: Նման դասերը աշակերտին տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ այն աշխարհի մասին, որտեղ նա ապրում է: Ինտեգրումը ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը [1, էջ 86]:

Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Այն առանձնանում է նրանով, որ կապված է ոչ միայն դպրոցական առարկաների, այլ նաև հասարակության, հասարակական կյանքի, մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների հետ: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն:

Կարելի է ենթադրել, որ ինտեգրված դասերը միտված են աշակերտի բազմակողմանի զարգացմանը: Քանի որ նմանատիպ դասերի ընթացքում աշակերտները պարբերապար սկսում են կապ հաստատել տարբեր առարկաների, երևույթների, հասկացությունների միջև, նրանք սկսում են աշխարհը դիտարկել որպես մեկ ամբողջություն: Սրա շնորհիվ աշակերտները ստանում են աշխարհի հոլիստիկ՝ ամբողջական պատկերը: Ինքնին հոլիզմ հասկացությունը ենթադրում է, որ համակարգի բոլոր տարրերը՝ ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական կամ քաղաքական, միմյանց հետ փոխկապակցված են, ուստի պետք է գնահատվեն որպես ամբողջություն[1, էջ 87]:

Մանկավարժական գրականությունը մանրամասն անդրադարձ է կատարում ինտեգրված դասերի առանձնահատկություններին և արդյունավետությանը: Ինտեգրված դասերի

արդյունավետությունը ուսումնառության ընթացքում պարզելու նպատակով իրականացվել էր հետազոտություն: 2020թ. ՀՀ մի շարք դպրոցներում Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի աշխատակիցների կողմից իրականացվել է շուրջ 99 դասալսում, որոնցից ինտեգրված դաս առանձնացվել է 11- ում, դասալվող ուսուցիչները 40-ն էին: Կատարված հարցումը ուսուցիչների շրջանում տվել է հետևյալ պատասխանները՝

- Ուսուցիչների միայն 25%-ն է իրականացնում ինտեգրված ուսուցում:
- Ամենաշատ ինտեգրվող առարկաներն են՝ հայոց լեզուն կամ մայրենին, պատմությունը, գրականությունը, աշխարհագրությունը, անգլերենը և ֆիզիկան:
- Ուսուցիչների 56%-ը բախվում է խոչընդոտների՝ նախապատրաստական փուլում, 26%-ը՝ իրականացման, 9%-ը՝ ամփոփման, 9%-ը ոչ մի փուլում խոչընդոտներ չի ունենում:
- Ուսուցիչների 76%-ը ինտեգրված դասեր պլանավորելիս համագործակցում է այլ առարկաների ուսուցիչների հետ, 24%-ը՝ ոչ:
- Հարցման արդյունքում ուսուցիչները նկատել են, որ ինտեգրված դասերի առավելությունները գերակշռում են խոչընդոտներին: Դասերը հետաքրքիր են, ավելի արդյունավետ են դարձնում նյութի ընկալումը: Մեծ մասը նաև նշել է, որ այդ դասերը ավելի աշակերտակենտրոն են, ինչը խթան է հանդիսանում և մոտիվացնում է աշակերտներին՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու գործընթացում: Այս կերպ աշակերտները կապ են հաստատում այլ առարկաների միջև՝ տեսնելով աշխարհի ընդհանուր պատկերը: Հետազոտությունները կատարվել են 3–10-րդ դասարաններում: Հարցումներին մասնակցել է ավելի քան 40 աշակերտ: Աշակերտների շրջանում կատարված ուսումնասիրությունները տվել են հետևյալ արդյունքները՝

- Աշակերտների շուրջ 76 %-ը հավանում է ինտեգրված դասերը, 18%-ը՝ մասամբ, 6 %-ը՝ ոչ: Նրանցից 53 %-ը պատասխանեց, որ դասից իրենց ավելի դուր եկավ դասի անցկացման ձևը, 29%-ին դուր եկավ դասի ընթացքը, 18%-ին՝ դասի նյութը:

• Աշակերտները նկատել են, որ ինտեգրված դասում առկա են համեմատություններ տարբեր նյութերի միջև: Աշակերտները նշել են, որ դասի ժամանակ ավելի տպավորվել են նոր բառերը, արտահայտությունները, հոմանիշները, նոր տեղեկատվությունը, ավելի հեշտ է եղել մտապահել նյութը:

• 73%-ը կցանկանար, որ նմանատիպ դասերը կրկնվող բնույթ կրեն, 21%-ի մոտ մասամբ կա նման ցանկություն, իսկ 6%-ը չի ցանկանում նման դասեր նորից ունենալ:

Նմանատիպ դասերը հիմք են ընդունում աշակերտների կարիքները, փորձը, հետաքրքրությունները, իրենց բնույթով աշակերտակենտրոն են և նպաստում են նաև ստեղծագործական և քննական մտածողության զարգացմանը[1, էջ 89]:

3. Հետազոտական մաս

«Մայրենի», «Կերպարվեստ» և «Երգ-երաժշտություն» առարկաները, լինելով արվեստի բնագավառի առարկաներ, հաճախ կարելի է ինտեգրել: Դրանք ընդհանրություններ ունեն և՛ բովանդակային առումով, և՛ դասի նպատակների, աշակերտների կարողունակությունների զարգացման առումով: Այդ առարկաների ինտեգրումը նպաստում է սովորողների՝ արվեստի ավելի լայն ընկալմանը, գեղագիտական դաստիարակությանը, բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակմանը: 6-րդ դասարանի «Մայրենի» առարկայի ծրագրի շատ թեմաներ ուսուցանելիս անհրաժեշտություն է առաջանում միջառարկայական կապեր ստեղծելու, ինտեգրելու «Կերպարվեստ» առարկայի հետ: Օրինակ՝ Մարտիրոս Սարյան, «Գրառումներ իմ կյանքից», Վախթանգ Անանյան, «Անձրև», Ստեփան Զորյան, «Պապն ու թոռը», Լեոնարդո դա Վինչի, «Որդիական երախտագիտություն», «Արա Գեղեցիկ և Շամիրամ» /ըստ Խորենացու/, Սիլվա Կապուտիկյան, «Մասիսին մոտիկ», «Վախթանգ Անանյան, «Սևանա լիճ», Ավետիք Իսահակյան, «Արագածին», Համո Սահյան, «Արաքսը», Վիգեն Խեչումյան, «Գլուխգործոց», Աղասի Այվազյան, «Պոեմ վասն շենքի և շինության», Ավետիք Իսահակյան, «Եղնիկը», Դավիթ Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը»,

Ակսել Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն», Համո Սահյան, «Ժայռից մասուր է կաթում» և այլն։ Կան նաև ծրագրային թեմաների համընկնումներ՝ Նկարագրություն, Դիմանկար, Բնանկար։ Վ. Խեչումյանի «Գլուխգործոց» պատմվածքը, որը պատմում է մանրանկարիչ Մոմիկի մասին, կարելի է ինտեգրել «Կերպարվեստ» առարկայի «Հայ մանրանկարչություն» թեմայի հետ։ Անհնարին է պատկերացնել գեղարվեստական որևէ ստեղծագործության ուսուցում, որի ընթացքում չպահանջվի միջառարկայական կապ ստեղծել կերպարվեստի, գեղանկարչության հետ։ Իսկ ինտեգրված դասը աշակերտներին օգնում է ավելի խոր ընկալելու նյութը, միացնելու զգայականն ու առարկայականը, պատկերն ու խոսքը, երևակայականը և իրականը, խթանում է ստեղծագործական միտքը։

Ուսումնական տարվա սկզբին՝ մեթոդմիավորման աշխատանքները պլանավորելիս, ինտեգրված դաս կազմակերպելու նպատակով հայոց լեզվի և կերպարվեստի ուսուցիչները քննարկում են թեմաները, որոշում, թե որ թեման ուսուցանելիս է հնարավոր և անհրաժեշտ ինտեգրված դաս կազմակերպել։ Որոշվում են նպատակները, համեմատվում թեմատիկ պլանավորումները, ժամկետները, դասարանը և այլն։ Դասի նպատակները հստակեցնելուց հետո որոշվում է ուսումնական նյութերի ծավալը, կատարվում աշխատանքի բաժանում։ Ուսումնական նյութերը հավաքելիս կարելի է ընդգրկել նաև աշակերտներին։ Ցանկալի է հաշվի առնել նաև աշակերտների ցանկությունները, նախասիրությունները։

6-րդ դասարանի «Մայրենի» առարկայի ծրագրային նյութերից է հայրենի բնաշխարհին նվիրված թեման։ Այն ընդգրկում է հայրենի բնության, կենդանական աշխարհի մասին նյութեր՝ Ավետիք Իսահակյան, «Եղնիկը», Դավիթ Մուրադյան, «Մազաթափ գամփռը և աշունը», Ակսել Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն», Համո Սահյան, «Ժայռից մասուր է կաթում», Ա. Ավագյան, «Մի խուլ դղրդոց լսվեց երկնքում»։ Որպես գրականագիտական նյութ՝ ուսումնասիրվում է նաև «Նկարագրություն, բնանկար» թեման։ Նշված նյութերը կապվում են «Կերպարվեստ» առարկայի հետ, «Բնանկար» թեման նույնպես ընդգրկված է նշված առարկայական ծրագրում։ Համընկնում են նաև դասերի նպատակները՝ ընկալել բնանկարի առանձնահատկությունները, հեղինակի արտահայտած գաղափարները, ընկալել բնապատկերում տրամադրություն ստեղծող գույները, կարողանալ խոսքային և

գեղանկարչական բնապատկեր ստեղծել և այլն: Այսպիսով, միջառարկայական կապը, ինտեգրվող թեման, նյութը, ինտեգրված դասի անցկացման դրդապատճառները, նպատակները հնարավորություն են տալիս անցկացնելու ինտեգրված դաս :

Ներկայացնում ենք **ինտեգրված դասի պլանի նմուշ**:

Առարկա՝ «Մայրենի»

ինտեգրված առարկա՝ «Կերպարվեստ»

դասարանը՝ 6-րդ

դասի տևողությունը՝ 90 րոպե

դասի թեման՝ Ակսել Բակունց, «Աշուն է, պայծառ աշուն»: Նկարագրություն, բնանկար

դասի թեման «Կերպարվեստ» առարկայից՝ «Բնանկար»

դասի նպատակները՝

- հասկանալ բնանկարի խոսքային դրսևորումը
- իմանալ բնանկարի առանձնահատկությունները
- նշել բնապատկերում տրամադրություն ստեղծող գերակշռող գույները
- ընկալել հատվածի հիմնական գաղափարը
- բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի դաստիարակում

կարողանալ՝

- գեղարվեստական երկերից նկարագրական հատվածների /դիմանկար, բնանկար/ ընտրություն և սեփական վերաբերմունքի դրսևորում ունենալ
- նկարագրել բնապատկերը
- գրել նկարագրական բնույթի տեքստ
- հորինել բնագրի ավարտի սեփական տարբերակներ
- ընկալել հեղինակի նկարագիրը
  կերպարվեստից՝

- պատկերել բնանկար՝ կիրառելով գույների, գունավոր բծերի, երանգների բազմազանությունը իրական պատկերներին հուզական վիճակներ, տրամադրություններ հաղորդելու համար
- փոխանցել գույնի զգացմունքային ներգործությունը մարդու տրամադրության վրա
- երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացում
- բնանկարում տրամադրության արտահայտում գունային համադրությունների միջոցով՝ նյուանսային և հակադրական, հնչեղ և մեղմ, ուրախության և տխրության գույներ

դասին գործածվող մեթոդներ, մեթոդական հնարներ՝ խմբային աշխատանք, մտքերի տարափ, երկթև աղյուսակ, քառաբաժան, Վենի դիագրամ, հետազոտում, ինքնուրույն աշխատանք

ուսումնական նյութեր՝ 6-րդ դասարանի «Մայրենի» դասագիրք, բնանկարներ /սահիկաշար/, առաջադրանքների թերթիկներ, բնանկարներ

Դասի ընթացքը։

1. Խթանման փուլ /10 րոպե/

ա/ բնանկարների դիտում՝ երաժշտության ուղեկցությամբ /սահիկաշար/

բ / «մտքերի տարափ» - ի՞նչ է բնանկարը

գ/ աշակերտներին նախապես հանձնարարվում է տեղեկություններ հավաքել սահիկաշարում ներկայացված նշանավոր նկարիչների բնանկարների մասին. նրանք համառոտ ներկայացնում են այդ տեղեկությունները։

2. Իմաստի ընկալման փուլ /30 րոպե/

ա/ Կարդալ բնանկարի մասին դասագրքի նյութը

բ/ բնութագրել բնանկարը՝ որպես գրական ստեղծագործության մեջ նկարագրություն և որպես գեղանկարչության տեսակ, կազմել երկթև աղյուսակ.

	Բնանկարը գրական երկում	Բնանկարը կերպարվեստում
միջոցներ	բառեր, բառակապակցություն, նախադասություն, պատկերավոր արտահայտություններ	գույներ, նրբերանգներ
նպատակ	տպավորիչ խոսք, հեղինակի զգաղափարների արտահայտում, հերոսի բնութագրում տրամադրության, հոգեվիճակի ավելի ցայտուն ատահայտում	բնության ձևերի, երևույթների, լույսի, օդի գեղարվեստական արտացոլում, հեղինակի մտքերի, զգաղափարների, զգացմունքների արտահայտում

գ/ դասագրքի նախորդ դասերից կարդալ բնանկարի օրինակներ։

գ/ ընթերցել Ակսել Բակուցի «Աշուն է, պայծառ աշուն» տեքստը, անգիր վերարտադրել դուր եկած հատվածը /հանձնարարվել է նախորդ դասին/

դ/ խմբային աշխատանք.

1-ին խումբ - ի՞նչ բառերով ու պատկերներով է գրողը նկարագրում աշունը։ Նկարագրել աշունը՝ օգտվելով դուրս գրած բառաշարքից։

2-րդ խումբ - Ո՞ր բառերը կդառնան մակդիրներ։ Կազմել նախադասություններ։

Ուժեղ, ժպտուն, քամի, արևածաղիկ, դառնաշունչ , դեղին

3-րդ խումբ – ա/ ո՞ր գույներն են երևում աշնանային բնապատկերում։ Ընտրել և գրել գունանունները։

բ/Պատմվածքի ընդհանուր տրամադրությունը ի՞նչ գույներով կարող ես հաղորդել, հիմնավորել ընտրությունը։

4-րդ խումբ - ա/ տեքստից ընտրել և նկարների տակ գրել ծառերի ու թփերի անունները, որոնց հանդիպեցիք հատվածում։

բ/ Ծառերից և թփերից յուրաքանչյուրը թող 1-2 նախադասությամբ պատմի իր մասին։

3. Կշռադատման փուլ /20 րոպե/

ա/ բակունցյան բնապատկերից ստացած տպավորությունները արտահայտել քառաբաժան աղյուսակով./աշխատել զույգերով, հետո քննարկել խմբով/

Ի՞նչ պատկեր տեսա	Ի՞նչ ձայներ լսեցի
Ի՞նչ զգացի	Ինչո՞վ հիացա

բ/ հատվածը համեմատել նախորդ դասերի աշնանային բնանկարների հետ. ի՞նչ նմանություններ և տարբերություններ են տեսնում, ներկայացնել Վենի դիագրամով /աշխատել խմբերով, քննարկել ամբողջ դասարանով, դիագրամը ներկայացնել գրատախտակին/

բ/ Ինքնուրույն աշխատանք. տեքստից դուրս գրել

Ամենագեղեցիկ բառը	Ամենաուրախ բառը	Ամենախոսուն բառը	Ամենալուռ բառը	Ամենաքնքուշ բառը	Ամենազարմանալի բառը

գ/ Ի՞նչ զույներով կներկեն այդ բառերը, հիմնավորել:

դ/ Աշակերտներին հանձնարարվում է նկարել իրենց պատկերացրած աշնանային բնանկարը, վերնագրել նկարը: Մեկ-երկու նախադասությամբ ներկայացնել, թե ինչ է ցանկացել արտահայտել բնանկարում: /25 րոպե/

4. Տնային առաջադրանքի հանձնարարում:

Ինչո՞ւ է աշունը պայծառ, և ինչո՞ւ է արևածաղիկը ժպտում, թեկուզև վերջինն է: Ընտրի՛ր քեզ համար նախընտրելի սկիզբը և շարունակի՛ր:

ա/ Աշունն ուրախ-զվարթ……

բ/ Արևը դեռ չի հեռացել ….

գ/ Արևն ու քամին ….

5. Գնահատում։ Գնահատելիս հաշվի առնել երկու առարկաներից աշակերտների կատարած աշխատանքները։

6. Ամփոփում։ /5 րոպե/

Հարցեր՝ ամփոփման համար.

ա/ Ի՞նչ նոր բան սովորեցիք բնանկարի մասին։

բ/Ինչո՞վ օգնեց բնանկարի մասին կերպարվեստից ունեցած գիտելիքը։

գ/Հատկապես ի՞նչը դուր եկավ այսօրվա դասից։

4. Եզրակացություն

«Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով» հետազոտական աշխատանքի համար առաջարկված թեմայի շրջանակում ուսումնասիրել ենք ինտեգրված դասը, դրա արդյունավետ կազմակերպումը։

Ուսումնասիրելով ինտեգրված դասի առանձնահատկությունները, անցկացման նպատակները, արդյունավետությունը, մեթոդները՝ գալիս ենք այն համոզման, որ ինտեգրված դասը այսօրվա կրթության անհրաժեշտություններից մեկն է։ Այն ուսուցիչների համագործակցության լավագույն ձևերից մեկն է, որը հնարավորություն է տալիս միասնաբար լուծելու կրթական շատ խնդիրներ, խթանում է ուսուցչի ինքնակրթությունը, զարգացնում ստեղծագործական հմտությունները, մղում է համագործակցության և փորձի փոխանակման։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լինելով դասի ոչ ստանդարտ ձև՝ ինտեգրված դասը աշակերտներին դուր է գալիս, քանի որ ավելի հետաքրքիր է, անսովոր, տարբերվող ամենօրյա դասերից: Ինտեգրված դասը ապահովում է աշակերտի աշխարհայացքի միասնական, համակարգված ձևավորումը, նպաստում ճանաչողական դաշտի ընդլայնմանը, գիտելիքի կիրառելիության կարևորության ընկալմանը, կենտրոնացնում է ուշադրությունը, աշակերտին հնարավորություն է տալիս կարևորելու ունեցած գիտելիքները, համակարգելու դրանք:

Ինտեգրված դասերի՝ մեր կողմից ուսումնասիրված պլաններում հիմնականում գերակշռում են որևէ առարկայի գիտելիքների կիրառումը տվյալ դասին, հիմնականում շեշտադրվում են միջառարկայական կապերը: Քանի որ ինտեգրված դասեր այնքան էլ շատ չեն կազմակերպվում, թեման կարոտ է առավել խոր ուսումնասիրության, առավել հաճախ պետք է կազմակերպվեն ինտեգրված դասեր, կատարելագործվեն մեթոդները, կարևորվի դրանց արդյունավետ կիրառումը: Ինտեգրված դասը առավել արդյունավետ է, երբ միջառարկայական կապերից բացի, կարևորվում են ինտեգրվող դասերի նպատակները, ինտեգրված դաս անցկացնելու դրդապատճառները, նույն երևույթը տարբեր տեսանկյուններից դիտարկելը, առարկաների փոխադարձ ներթափանցումը, մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը:

Առաջարկություն: Դասագրքերում ընդգրկել ինտեգրում պահանջող առաջադրանքներ, համակողմանի կապ ստեղծել տարբեր առարկաներից ուսումնասիրվող նյութերի միջև, նաև թեմատիկ պլաններում առաջարկել ինտեգրված դասերի թեմաներ:

Կարելի է ինտեգրված դասերից բացի, կազմակերպել նաև առարկայական միջոցառումներ՝ ինտեգրված առարկաներով:

5. Գրականություն

1. Լուիզա Միլիտոսյան, Աննա Գաբրիելյան, «Ինտեգրված դասերի դերն ամբողջական աշխարհայացքի զարգացման գործընթացում», հոդված, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի «Լինգվա» հրատարակչություն, Երևան-2021թ., 11 էջ

2. Փնջոյան Տաթևիկ, Ինտեգրումը կրթական գործընթացում, հոդված (vsu.am), 2018թ., էջ 402 - 407, 6 էջ

3. «Կերպարվեստ» առարկայի փորձնական ծրագիր և չափորոշիչ, 261 էջ, 30.04.2021թ.74335e5a5095742f073c86702d262781.pdf (escs.am)

4.«Մայրենի» առարկայի փորձնական ծրագիր և չափորոշիչ, 224 էջ, 30.04. 2021թ. 1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf (escs.am)

5. Պաշարների շտեմարան (armedu.am) /որոնում՝ ինտեգրված դասեր/

6. Հավելված

Ինտեգրված դասին անհրաժեշտ ուսումնական նյութեր

1. Ո՞ր գույներն են երևում աշնանային բնապատկերում: Ընտրի՛ր և գրի՛ր գունանունները:

2. Նկարագրի՛ր քո աշունը, ի՞նչ տեսքով և ի՞նչ գույներով է աշունը ներկայանում քեզ

3. Տեքստից ընտրի՛ր և նկարների տակ գրի՛ր ծառերի ու թփերի անունները, որոնց հանդիպեցիր հատվածում։

4. Նշանավոր ի՞նչ նկարիչների բնանկարներ գիտես։ Ներկայացրո՛ւ հավաքածդ տեղեկությունները։


.am

5. Հատվածը համեմատել նախորդ դասերի աշնանային բնանկարների հետ. ի՞նչ նմանություններ և տարբերություններ եք տեսնում, ներկայացնել Վենի դիագրամով